



Հայկական մշակույթ դասընթացի ծրագիր

Ցանկ

Հայկական մշակույթ.....	2
Ճարտարապետություն.....	2
AC320: Հայկական ճարտարապետության ներածություն-մաս 1 (արևելահայերեն) - 3 կրեդիտ.....	2
AC330: Հայկական ճարտարապետության ներածություն-մաս 2 (արևելահայերեն) - 3 կրեդիտ.....	6
Ճարտարապետություն դասընթացի հեղինակներ.....	10
Երաժշտություն.....	11
AC340: Հայկական երաժշտության ներածություն-մաս 1 (արևելահայերեն) - 3 կրեդիտ.....	11
AC350: Հայկական երաժշտության ներածություն-մաս 2 (արևելահայերեն) - 3 կրեդիտ.....	15
Երաժշտության դասընթացի հեղինակներ.....	18



ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

Մշակույթի ֆակուլտետի դասընթացները ուսանողներին ներկայացնում են հայկական մշակույթի բնագավառների ներածությունը և հայերի մշակութային հարուստ ժառանգությունը ինչպես իր պատմական հայրենիքում, այնպես էլ հայրենիքի սահմաններից դուրս:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայկական ճարտարապետությունը համարվում է համաշխարհային մշակույթի բաղկացուցիչ մաս՝ իր հուշարձաններով զգալի դեր ունենալով համաշխարհային ճարտարապետության զարգացման մեջ:

Դասընթացն ուսանողներին օգնում է ընդհանուր պատկերացում կազմել հայկական ճարտարապետության պատմության վերաբերյալ՝ սկսելով վաղ ժամանակաշրջանի հայկական ճարտարապետական հուշարձաններից և ավարտելով ժամանակակից շրջանով:

AC320: Հայկական ճարտարապետության ներածություն-մաս 1 (արևելահայերեն) - 3 կրեդիտ

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ (սեղմեք այստեղ ակադեմիական օրացույցը տեսնելու համար)

ԱԿՆԿԱԿՎՈՂ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՆԴՂԱԿ (ԺԱՄԵՐ/ՇԱԲԱԹ)

Նյութեր (ձայնա-, տեսա- և տեքստային)	1-2 ժամ
Քննարկումներ	2-3 ժամ
Հարցումներ, առաջադրանքներ	1-2 ժամ
Շաբաթական ակնկալվող մասնակցություն	4-7 ժամ

Մասնակիցները պետք է.

- նամակագրական կապ ունենան իրենց համակուրսեցիների հետ և հաղորդակցվեն ֆորում-քննարկումների, չաթի, Skype-ի, ձայնա- և տեսակոնֆերանսի միջոցով,
- ընթերցեն և քննարկեն օնլայն տեքստերն ու նյութերը,
- աշխատեն փոքր խմբերով և անհատապես՝ կիրառելով օնլայն գործիքների մի ամբողջ համակարգ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հայկական մշակույթի դասընթացի ծրագիր

Այցելեք [ՀՎՀ կայք](#) փաստաթղթում առկա տեղեկատվության ամենավերջին տարբերակին ծանոթանալու համար:



Հայկական ճարտարապետությունը համաշխարհային մշակույթի բաղկացուցիչն է ոչ միայն իր հուշարձաններով, այլև համաշխարհային ճարտարապետության զարգացման մեջ իր ունեցած դերով: Հայկական ճարտարապետության դասընթացի առաջին մասը ներկայացնում է պատմական կամ մինչխորհրդային շրջանի հայոց ճարտարապետության համառոտ նկարագրությունը: Շեշտը դրված է հայոց ճարտարապետության, ճարտարապետական դետալների ու զարդարվեստի կամ հարդարանքի արվեստի վրա: Դասընթացը իր դրույթներով հիմնվում և զարգացնում է Թորոս Թորամանյանի հայկական ճարտարապետության պատմությանը նվիրված աշխատությունների, ինչպես նաև Վ. Մ. Հարությունյանի մշակած հայկական ճարտարապետության առաջին դասագրքի տեսակետները: Դասընթացը մատչելի է մեծ լսարանի համար: Դասընթացը բաղկացած է 8 դասից և ներառում է հնագույն ժամանակներից մինչև Զաքարյանների թագավորության ժամանակաշրջանը (12-14-րդ դարեր):

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՅՈՒԹԵՐԸ

Անհրաժեշտ չէ տպագրել օնլայն նյութերը: Դրանք դասերի մասն են կազմում: Ուսանողները պետք է կարդան, լսեն, դիտեն ամբողջ նյութը և կատարեն բոլոր առաջադրանքները: Օնլայն նյութերը կազմված են հասարակայնորեն հասանելի մասնագիտական պատմական գրականության, գիտական ուսումնական ծրագրերի, հայ և օտարազգի հեղինակների ուսումնասիրությունների, բազմալեզու աշխատությունների և հրապարակումների հիման վրա: Էլեկտրոնային նյութերը պատրաստված են համալսարանական և մինչհամալսարանական ուսանողների, միջնակարգ դպրոցների պատմության ուսուցիչների, Հայաստանի և Սփյուռքի չափահաս անձանց համար:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

- Ա. Սահինյան, Գառնիի անտիկ կառույցները, Երևան, 1988 (հայերեն և ռուսերեն):
- Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955:
- Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմություն, հտ. 1 և 2, Երևան, 1942 և 1948:
- Թ. Թորամանյան, Զվարթնոց, Գագկաշեն, Երևան, 1984:
- Հ. Խալփախյան, Հայկական ճարտարապետության համընդհանուր պատմություն 12 հատորով, հտ. 3, Լենինգրադ-Մոսկվա, 1966, էջ 197-299 (ռուսերեն):
- Հ. Խալփախյան, Միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետությունը, Երևան, 1971 (ռուսերեն):
- Հայկական ճարտարապետության պատմություն 6 հատորով, հտ. 1, 2 և 3, Երևան, 1996, 2002 և 2004:
- Մ. Հասրաթյան, Վաղբրիստոնեական հայկական ճարտարապետություն, Մոսկվա, 2000 (ռուսերեն և անգլերեն):
- Ն. Տոկարսկի, Հայկական ճարտարապետություն (IV-XIV դ.դ.), Երևան, 1961 (ռուսերեն):
- Պ. Կունեո, Հայկական ճարտարապետություն, հտ. 1 և 2, Հռոմ, 1988 (իտալերեն):
- Ս.Խ. Մնացականյան, Հայկական գավիթների ճարտարապետությունը, Երևան, 1952 (ռուսերեն):
- Ս.Խ. Մնացականյան, Հայաստանի և Բյուզանդիայի խաչագմբեթ հորինվածքները V-VII դ.դ., Երևան, 1989 (ռուսերեն):
- Ս.Ս. Մնացականյան, Հայկական վաղմիջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, 1982:
- Վ.Մ. Հարությունյան, Հայկական հուշարձաններ, Բեյրութ, 1975 (հայերեն, անգլերեն, ֆրանսերեն):
- Վ.Մ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



Դասընթացն ավարտելուց հետո ուսանողները ծանոթ կլինեն հայոց ճարտարապետության պատմական շրջանի և վերջինիս պատմական ժառանգության հետ: Հայկական ճարտարապետության պատմության նշանակալից իրադարձությունների ժամանակագրությունը կօգնի ուսանողներին գիտելիքներ ունենալ յուրաքանչյուր պատմական շրջանի ճարտարապետական զարգացումների վերաբերյալ:

ԹԵՄԱՆԵՐԸ

- Նախնական համայնատիրական ժառանգությունը հայկական լեռնաշխարհում
- Ուրարտական կամ Վանի թագավորության ժամանակաշրջանի ճարտարապետությունը
- Հին կամ Անտիկ Հայաստանի ճարտարապետությունը
- Հայկական ճարտարապետության տաճարային տիպերն ու դրանց կազմավորումը
- Հայկական ճարտարապետությունը վաղ միջնադարում
- Հայկական ճարտարապետությունը զարգացած միջնադարում
- Զաքարյանների շրջանի ճարտարապետությունը (12-14-րդ դարեր)
- Կիլիկյան Հայաստանի ճարտարապետությունը

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Էլեկտրոնային նյութերը պատրաստված են օգտագործման, ինչպես նաև լսարանի համար մատչելի սկզբունքով: Օնլայն ուսուցիչների կողմից անցկացվող առաջադրանքներն ու օնլայն քննարկումները ուսանողներին կօգնեն ներգրավվել հայկական ճարտարապետության պատմությունը ուսումնասիրելու և մանրամասն վերլուծություն կատարելու գործընթացի մեջ: Անհատական և խմբային առաջադրանքների օգնությամբ ուսանողները կկատարեն ճշգրիտ ուսումնասիրություններ և հնարավորություն կունենան համատեղ աշխատել, ինչպես նաև տեղեկատվությունը փոխանակել իրենց համադասարանցիների հետ:

ԴԱՍԱՑՈՒՑԱԿԸ

Դասընթացը տևում է 9 շաբաթ, ներառյալ ծանոթացման շաբաթը և նախատեսում է ուսանողի մասնակցությունը յուրաքանչյուր շաբաթվա առնվազն 5 օրերի ընթացքում:

Շաբաթ 0	Ծանոթացման շաբաթ Ուսանողները ծանոթանում են Ուսանողի Ուղեցույցի հետ, լրացնում են ուսման ոճերի հարցաշարը, լրացնում են անձնական թերթիկը, ներկայանում են միմյանց, մասնակցում են ֆորում-քննարկմանը, գտնում են այն ժամային գոտին, որտեղ աշխատելու են: Ուսանողները ծանոթանում են նաև հաղորդակցման և ուսումնական այն օնլայն գործիքների հետ, որոնք կիրառելու են դասընթացի ընթացքում:
Շաբաթ 1-8	Դաս 1-8 (օնլայն տեքստերի և մուլտիմեդիա միջոցների օգտագործում) Անհատական և խմբային աշխատանքներ Հարցումներ
Շաբաթ 3	Անհատական աշխատանքի հանձնում
Շաբաթ 7	Խմբային աշխատանքի հանձնում

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Ուսանողները պետք է ակտիվորեն մասնակցեն օնլայն քննարկումներին, ֆորումներին, չաթերին, մասնակցեն անհատական և խմբային աշխատանքներին, ինչպես նաև հանձնեն բոլոր



առաջադրանքները սահմանված ժամկետներում:

Ուսանողները պետք է ծանոթ լինեն և ենթարկվեն [ՀՎՀ-ի ակադեմիական քաղաքականությանը](#):

Անհատական նախագծի նկարագրությունը. յուրաքանչյուր ուսանող աշխատում է իր անհատական նախագծի վրա և ներկայացնում այն սահմանված ժամկետում: Նախագիծը պետք է հիմնված լինի դասընթացի ընթացքում ուսումնասիրած նյութի վրա: Ուսանողները նախապես պետք է օնլայն ուսուցչի հետ խորհրդակցեն ընտրած թեմայի և բովանդակության շուրջ: Այն ուսանողները, ովքեր թեման կընտրեն նախօրոք, հնարավորություն կունենան դասընթացի ընթացքում կատարված աշխատանքները և քննարկումներն օգտագործել իրենց նախագծում:

Խմբային նախագծի նկարագրությունը. խմբային նախագիծը հիմնված է համեմատական մեթոդի վրա: Ուսանողները կուսումնասիրեն հայկական ճարտարապետական հուշարձանների պատմությունը, կներկայացնեն իրենց երկրներում գտնվող հայկական ճարտարապետական արժեքները: Խմբի անդամները միասին կորոշեն իրենց աշխատանքի ձևը, Word կամ PowerPoint կամ այլ թվային ծրագրերի օգնությամբ կստեղծեն աշխատանքը՝ ներկայացնելով կատարված համեմատությունները և ուսումնասիրությունների գուգահեռները:

Ուսանողների առաջադիմությունը կգնահատվի ամբողջ ուսումնական շրջանի ընթացքում ստացած գնահատականների հիման վրա, ինչը ձևավորվում է հետևյալ սկզբունքներով.

20% - մասնակցություն

25% - անհատական աշխատանք

25% - խմբային աշխատանք

30% - ավարտական քննություն

Գնահատումը կկատարվի տառային մեթոդով համաձայն [ՀՎՀ-ի գնահատման քաղաքականության](#):

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՈՒՇ ՀԱՆՁՆՈՒՄ

Առաջադրանքները պետք է հանձնել նախատեսված ժամկետներում: Այս կերպ ուսանողը հետ չի ընկնի դասերից, իսկ օնլայն ուսուցիչը հնարավորություն կունենա հետևողականորեն գնահատել աշխատանքը: Եթե աշխատանքը հանձնվում է սահմանված ժամկետից մեկ շաբաթ ուշ, ապա գնահատականը նվազում է 10%-ով (եթե իհարկե ուսանողը նախապես չի ստացել օնլայն ուսուցչի համաձայնությունը): Սահմանված ժամկետից երկու շաբաթ ուշ հանձնված աշխատանքները կընդունվեն, կստուգվեն, բայց չեն գնահատվի: Բացառություններ կլինեն միայն որոշ հարգելի դեպքերում:

Գրանցվելու համար, խնդրում ենք լրացնել [գրանցման հայտը](#):



AC330: Հայկական ճարտարապետության ներածություն-մաս 2 (արևելահայերեն) - 3 կրեդիտ

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ (սեղմք այստեղ ակադեմիական օրացույցը տեսնելու համար)

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՆԴՂԱԿ (ԺԱՄԵՐ/ՇԱԲԱԹ)

Նյութեր (ձայնա-, տեսա- և տեքստային)	1-2 ժամ
Քննարկումներ	2-3 ժամ
Հարցումներ, առաջադրանքներ	1-2 ժամ
Շաբաթական ակնկալվող մասնակցություն	4-7 ժամ

Մասնակիցները պետք է.

- նամակագրական կապ ունենան իրենց համակուրսեցիների հետ և հաղորդակցվեն ֆորում-քննարկումների, չաթի, Skype-ի, ձայնա- և տեսակոնֆերանսի միջոցով,
- ընթերցեն և քննարկեն օնլայն տեքստերն ու նյութերը,
- աշխատեն փոքր խմբերով և անհատապես՝ կիրառելով օնլայն գործիքների մի ամբողջ համակարգ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հայկական ճարտարապետությունը համաշխարհային մշակույթի բաղկացուցիչն է ոչ միայն իր հուշարձաններով, այլև համաշխարհային ճարտարապետության զարգացման մեջ ունեցած դարաստեղծ նշանակությամբ: Դասընթացը բաղկացած է 8 դասից և ներկայացնում է միջնադարյան և ժամանակակից հայկական ճարտարապետության մանրամասն նկարագրությունը: Դասընթացը մատչելի է մեծ լսարանի համար: Դասընթացը իր դրույթներով հիմնվում և զարգացնում է Թորոս Թորամանյանի հայկական ճարտարապետության պատմությանը նվիրված աշխատությունների, ինչպես նաև Վ. Մ. Հարությունյանի մշակած հայկական ճարտարապետության առաջին դասագրքի տեսակետները:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՅՈՒԹԵՐԸ

Անհրաժեշտ չէ տպագրել օնլայն նյութերը: Դրանք դասերի մասն են կազմում: Ուսանողները պետք է կարդան, լսեն, դիտեն ամբողջ նյութը և կատարեն բոլոր առաջադրանքները:

Օնլայն նյութերը կազմված են հասարակայնորեն հասանելի մասնագիտական պատմական գրականության, գիտական ուսումնական ծրագրերի, հայ և օտարազգի հեղինակների ուսումնասիրությունների, բազմալեզու աշխատությունների և հրապարակումների հիման վրա: Էլեկտրոնային նյութերը պատրաստված են համալսարանական և մինչհամալսարանական ուսանողների, միջնակարգ դպրոցների պատմության ուսուցիչների, Հայաստանի և Մփյուռքի չափահաս անձանց համար:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

Հայկական մշակույթ դասընթացի ծրագիր

Այցելեք [ՀՎՀ կայք](#) փաստաթղթում առկա տեղեկատվության ամենավերջին տարբերակին ծանոթանալու համար:



- Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմություն, հտ. 1 և 2, Երևան, 1942 և 1948:
- Թ. Թորամանյան, Զվարթնոց, Գագկաշեն, Երևան, 1984:
- Հ. Խալփախյան, Հայկական ճարտարապետության համընդհանուր պատմություն 12 հատորով, հտ. 3, Լենինգրադ-Մոսկվա, 1966, էջ 197-299 (ռուսերեն):
- Հ. Խալփախյան, Միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետությունը, Երևան, 1971 (ռուսերեն):
- Պ. Կունետ, Հայկական ճարտարապետություն, հտ. 1 և 2, Հռոմ, 1988 (իտալերեն):
- Հայկական ճարտարապետության պատմություն 6 հատորով, հտ. 1, 2 և 3, Երևան, 1996, 2002 և 2004:
- Մ. Հասրաթյան, Վաղքրիստոնեական հայկական ճարտարապետություն, Մոսկվա, 2000 (ռուսերեն և անգլերեն):
- Վ.Ս. Հարությունյան, Հայկական հուշարձաններ, Բեյրութ, 1975 (հայերեն, անգլերեն, ֆրանսերեն):
- Վ.Ս. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992:
- Ս.Խ. Մնացականյան, Հայկական գավիթների ճարտարապետությունը, Երևան, 1952 (ռուսերեն):
- Ս.Խ. Մնացականյան, Հայաստանի և Բյուզանդիայի խաչագմբեթ հորինվածքները V-VII դ.դ., Երևան, 1989 (ռուսերեն):
- Ս.Ս. Մնացականյան, Հայկական վաղմիջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, 1982:
- Ա. Սահինյան, Գառնիի անտիկ կառույցները, Երևան, 1988 (հայերեն և ռուսերեն):
- Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955:
- Ն. Տոկարսկի, Հայկական ճարտարապետություն (IV-XIV դ.դ.), Երևան, 1961 (ռուսերեն):

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դասընթացն ավարտելուց հետո ուսանողները ծանոթ կլինեն միջնադարյան և ժամանակակից հայկական ճարտարապետության և ճարտարապետական հուշարձանների հետ: Հայկական ճարտարապետության պատմության նշանակալից իրադարձությունների ժամանակագրությունը կօգնի ուսանողներին գիտելիքներ ձեռքբերել յուրաքանչյուր պատմական շրջանի ճարտարապետական զարգացումների վերաբերյալ:

ԹԵՄԱՆԵՐԸ

- Հայկական ճարտարապետության միջնադարյան դպրոցներ
- Հայկական ճարտարապետությունը ուշ միջնադարում
- Քաղաքաշինությունը և ճարտարապետությունը նոր ժամանակաշրջանում (19-րդ դ.)
- Խորհրդահայ ճարտարապետությունը հիմնադրաման փուլում և երկրորդ աշխարհամարտի տարիներին (1920-1945 թթ.)
- Հայկական ճարտարապետությունը երկրորդ աշխարհամարտի ավարտից մինչև անկախության հռչակումը
- Հայկական ճարտարապետությունը անկախության տարիներին
- Հայկական գաղթավայրերի ճարտարապետությունը

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Էլեկտրոնային նյութերը պատրաստված են օգտագործման, ինչպես նաև լսարանի համար մատչելի սկզբունքով: Օնլայն ուսուցիչների կողմից անցկացվող առաջադրանքներն ու օնլայն քննարկումները ուսանողներին կօգնեն ներգրավվել հայկական ճարտարապետության պատմությունը ուսումնասիրելու և մանրամասն վերլուծություն կատարելու գործընթացի մեջ: Անհատական և խմբային առաջադրանքների օգնությամբ ուսանողները կկատարեն ճշգրիտ ուսումնասիրություններ և



հնարավորություն կունենան համատեղ աշխատել, ինչպես նաև տեղեկատվությունը փոխանակել իրենց համադասարանցիների հետ:

ԴԱՍԱՑՈՒՑԱԿ

Դասընթացը տևում է 9 շաբաթ, ներառյալ ծանոթացման շաբաթը և նախատեսում է ուսանողի մասնակցությունը յուրաքանչյուր շաբաթվա առնվազն 5 օրերի ընթացքում:

Շաբաթ 0	Ծանոթացման շաբաթ Ուսանողները ծանոթանում են Ուսանողի Ուղեցույցի հետ, լրացնում են ուսման ոճերի հարցաշարը, լրացնում են անձնական թերթիկը, ներկայանում են միմյանց, մասնակցում են ֆորում-քննարկմանը, գտնում են այն ժամային գոտին, որտեղ աշխատելու են: Ուսանողները ծանոթանում են նաև հաղորդակցման և ուսումնական այն օնլայն գործիքների հետ, որոնք կիրառելու են դասընթացի ընթացքում:
Շաբաթ 1-8	Դաս 1-8 (օնլայն տեքստերի և մուլտիմեդիա միջոցների օգտագործում) Անհատական և խմբային աշխատանքներ Հարցումներ
Շաբաթ 3	Անհատական աշխատանքի հանձնում
Շաբաթ 7	Խմբային աշխատանքի հանձնում

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Ուսանողները պետք է ակտիվորեն մասնակցեն օնլայն քննարկումներին, ֆորումներին, չաթերին, մասնակցեն անհատական և խմբային աշխատանքներին, ինչպես նաև հանձնեն բոլոր առաջադրանքները սահմանված ժամկետներում:

Ուսանողները պետք է ծանոթ լինեն և ենթարկվեն [ՀՎՀ-ի ակադեմիական քաղաքականությանը](#):

Անհատական նախագծի նկարագրությունը. յուրաքանչյուր ուսանող աշխատում է իր անհատական նախագծի վրա և ներկայացնում այն սահմանված ժամկետում: Նախագիծը պետք է հիմնված լինի դասընթացի ընթացքում ուսումնասիրած նյութի վրա: Ուսանողները նախապես պետք է օնլայն ուսուցչի հետ խորհրդակցեն ընտրած թեմայի և բովանդակության շուրջ: Այն ուսանողները, ովքեր թեման կընտրեն նախօրոք, հնարավորություն կունենան դասընթացի ընթացքում կատարված աշխատանքները և քննարկումներն օգտագործել իրենց նախագծում:

Խմբային նախագծի նկարագրությունը. խմբային նախագիծը հիմնված է համեմատական մեթոդի վրա: Ուսանողները կուսումնասիրեն հայկական ճարտարապետական հուշարձանների պատմությունը, կներկայացնեն իրենց երկրներում գտնվող հայկական ճարտարապետական արժեքները: Խմբի անդամները միասին կորոշեն իրենց աշխատանքի ձևը, Word կամ PowerPoint կամ այլ թվային ծրագրերի օգնությամբ կստեղծեն աշխատանքը՝ ներկայացնելով կատարված համեմատությունները և ուսումնասիրությունների գուգահեռները:

Ուսանողների առաջադիմությունը կգնահատվի ամբողջ ուսումնական շրջանի ընթացքում ստացած գնահատականների հիման վրա, ինչը ձևավորվում է հետևյալ սկզբունքներով.

- 20% - մասնակցություն
- 25% - անհատական աշխատանք
- 25% - խմբային աշխատանք



30% - ավարտական քննություն

Գնահատումը կկատարվի տառային մեթոդով համաձայն [ՀՎՀ-ի գնահատման քաղաքականության](#):

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՈՒՇ ՀԱՆՁՆՈՒՄ

Առաջադրանքները պետք է հանձնել նախատեսված ժամկետներում: Այս կերպ ուսանողը հետ չի ընկնի դասերից, իսկ օնլայն ուսուցիչը հնարավորություն կունենա հետևողականորեն գնահատել աշխատանքը: Եթե աշխատանքը հանձնվում է սահմանված ժամկետից մեկ շաբաթ ուշ, ապա գնահատականը նվազում է 10%-ով (եթե իհարկե ուսանողը նախապես չի ստացել օնլայն ուսուցչի համաձայնությունը): Սահմանված ժամկետից երկու շաբաթ ուշ հանձնված աշխատանքները կընդունվեն, կստուգվեն, բայց չեն գնահատվի: Բացառություններ կլինեն միայն որոշ հարգելի դեպքերում:

Գրանցվելու համար, խնդրում ենք լրացնել [գրանցման հայտը](#):



Ճարտարապետություն դասընթացի հեղինակներ

Հայոց պատմության դասընթացի հիմնական նյութը հիմնված է հետևյալ անվանի գիտնականի աշխատությունների վրա.

- Դոկտոր Դավիթ Քերթմենջյան (պրոֆեսոր, Երևանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևան, Հայաստան)

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Դասընթացը ուսանողներին ներկայացնում է հայկական երաժշտության պատմությունը, երաժշտական մշակույթի հիմնական բաղադրիչները և առանձնահատկությունները: Ուսանողները կծանոթանան հայ ժողովրդական երաժշտական բանահյուսության, երաժշտական ֆոլկլորի ստեղծագործությունների, միջնադարյան Հայաստանի գուսանական և աշուղական արվեստի հետ:

Ուսանողները գիտելիքներ ձեռք կբերեն հայկական միջնադարյան երաժշտա-ծիսական մատյանների, նոտագրման համակարգի և վերջինիս հետագա զարգացումների, 19-րդ դարի հայ կոմպոզիտորական արվեստի, ինչպես նաև հայ անվանի կոմպոզիտորների ազգային դասական և կոմպոզիտորական ստեղծագործությունների մասին:

Դասընթացը հարուստ է հայկական երաժշտական բազմաթիվ նմուշներով, ինչպես նաև հայ անվանի կոմպոզիտորների ստեղծագործություններից առանձնացված հատվածներով:

AC340: Հայկական երաժշտության ներածություն-մաս 1 (արևելահայերեն) - 3 կրեդիտ

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ (սեղմեք այստեղ ակադեմիական օրացույցը տեսնելու համար)

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՆԴՂԱԿ (ԺԱՄԵՐ/ՇԱԲԱԹ)

Նյութեր (ձայնա-, տեսա- և տեքստային)	1-2 ժամ
Քննարկումներ	2-3 ժամ
Հարցումներ, առաջադրանքներ	1-2 ժամ
Շաբաթական ակնկալվող մասնակցություն	4-7 ժամ

Մասնակիցները պետք է.

- նամակագրական կապ ունենան իրենց համակուրսեցիների հետ և հաղորդակցվեն ֆորում-քննարկումների, չաթի, Skype-ի, ձայնա- և տեսակոնֆերանսի միջոցով,
- ընթերցեն և քննարկեն օնլայն տեքստերն ու նյութերը,
- աշխատեն փոքր խմբերով և անհատապես՝ կիրառելով օնլայն գործիքների մի ամբողջ համակարգ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ երաժշտության պատմության ներածությունը և այդ մշակույթի հիմնական բաղադրիչներն իրենց բնութագրերով: Դասի ընթացքում



ներկայացվում են հայ երաժշտության երկու խոշոր բաժանումները՝ մոնոդիկ երաժշտությունն ու կոմպոզիտորական արվեստը: Ներկայացվում են մոնոդիկ երաժշտության երեք հիմնական ենթաճյուղերը՝ հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործությունը կամ երաժշտական ֆոլկլորը, հայ ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտական ստեղծագործությունը, որը հին և միջնադարյան Հայաստանում հայտնի էր գուսանների արվեստով, ապա՝ աշուղների և, վերջապես, հայ միջնադարյան պրոֆեսիոնալ երաժշտաբանաստեղծական արվեստը, որը մեզ է հասել որպես հայ հոգևոր կամ եկեղեցական երգարվեստ: Դասընթացը մատչելի է մեծ լսարանի համար:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՅՈՒԹԵՐԸ

Անհրաժեշտ չէ տպագրել օնլայն նյութերը: Դրանք դասերի մասն են կազմում: Ուսանողները պետք է կարդան, լսեն, դիտեն ամբողջ նյութը և կատարեն բոլոր առաջադրանքները:

Օնլայն նյութերը կազմված են հասարակայնորեն հասանելի մասնագիտական պատմական գրականության, գիտական ուսումնական ծրագրերի, հայ և օտարազգի հեղինակների ուսումնասիրությունների, բազմալեզու աշխատանքների և հրապարակումների հիման վրա:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դասընթացն ավարտելուց հետո ուսանողները ծանոթ կլինեն հայկական մշակույթի մի բաղադրիչի՝ երաժշտության հետ: Ձեռք բերած գիտելիքների շնորհիվ ուսանողը կկարողանա ճիշտ դասակարգել և բնութագրել հայկական երաժշտական մշակույթի բաղկացուցիչ մասերը, ինչպես նաև նկարագրել այդ մշակույթի ձևավորումը, գոյատևումը և զարգացումը:

ԹԵՄԱՆԵՐԸ

- Ներածություն (հայ երաժշտության հիմնական ճյուղերի դասակարգումն ու ընդհանուր բնութագրերը)
- Հայ ժողովրդական ստեղծագործություն, հայ ժողովրդական երաժշտական բանահյուսություն կամ հայ երաժշտական ֆոլկլոր
- Հայ երաժշտական ֆոլկլորի չորս տեսակների ուսումնասիրությունը
- Աշխատանքային երգեր
- Ծիսական երգեր
- Պատմական և վիպական երգեր
- Հայ հոգևոր երաժշտության ձևավորումն ու զարգացումը. պատմական ակնարկ
- Հայ հոգևոր երաժշտության ժանրերը

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Էլեկտրոնային նյութերը պատրաստված են օգտագործման, ինչպես նաև լսարանի համար մատչելի սկզբունքով: Օնլայն ուսուցիչների կողմից անցկացվող առաջադրանքներն ու օնլայն քննարկումները ուսանողներին կօգնեն ներգրավվել հայկական երաժշտության պատմության իրադարձություններն ուսումնասիրելու և մանրամասն վերլուծություն կատարելու գործընթացի մեջ: Անհատական և խմբային առաջադրանքների օգնությամբ ուսանողները կկատարեն ճշգրիտ ուսումնասիրություններ և տեղեկատվության փոխանակում: Որքան ուսանողը ներգրավված լինի ուսման մեջ, այնքան արդյունավետ կլինի վերջինս:

ԴԱՍՍՑՈՒՑԱԿԸ

Դասընթացը տևում է 9 շաբաթ, ներառյալ ծանոթացման շաբաթը և նախատեսում է ուսանողի մասնակցությունը յուրաքանչյուր շաբաթվա առնվազն 5 օրերի ընթացքում:

Շաբաթ 0	Ծանոթացման շաբաթ Ուսանողները ծանոթանում են Ուսանողի Ուղեցույցի հետ, լրացնում են ուսման
----------------	---

Հայկական մշակույթ դասընթացի ծրագիր

Այցելեք [ՀՎՀ կայք](#) փաստաթղթում առկա տեղեկատվության ամենավերջին տարբերակին ծանոթանալու համար:



	<p>ոճերի հարցաշարը, լրացնում են անձնական թերթիկը, ներկայանում են միմյանց, մասնակցում են ֆորում-քննարկմանը, գտնում են այն ժամային գոտին, որտեղ աշխատելու են:</p> <p>Ուսանողները ծանոթանում են նաև հաղորդակցման և ուսումնական այն օնլայն գործիքների հետ, որոնք կիրառելու են դասընթացի ընթացքում:</p>
Շաբաթ 1-8	Դաս 1-8 (օնլայն տեքստերի և մուլտիմեդիա միջոցների օգտագործում) Անհատական և խմբային աշխատանքներ Հարցումներ
Շաբաթ 3	Անհատական աշխատանքի հանձնում
Շաբաթ 7	Խմբային աշխատանքի հանձնում

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Ուսանողները պետք է ակտիվորեն մասնակցեն օնլայն քննարկումներին, ֆորումներին, չաթերին, մասնակցեն անհատական և խմբային աշխատանքներին, ինչպես նաև հանձնեն բոլոր առաջադրանքները սահմանված ժամկետներում:

Ուսանողները պետք է ծանոթ լինեն և ենթարկվեն [ՀՎՀ-ի ակադեմիական քաղաքականությանը](#):

Անհատական նախագծի նկարագրությունը. յուրաքանչյուր ուսանող աշխատում է իր անհատական նախագծի վրա և ներկայացնում այն սահմանված ժամկետում: Նախագիծը պետք է հիմնված լինի դասընթացի ընթացքում ուսումնասիրած նյութի վրա: Ուսանողները նախապես պետք է օնլայն ուսուցչի հետ խորհրդակցեն ընտրված թեմայի և բովանդակության շուրջ: Այն ուսանողները, ովքեր թեման կընտրեն նախօրոք, հնարավորություն կունենան դասընթացի ընթացքում կատարված աշխատանքները և քննարկումներն օգտագործել իրենց նախագծում:

Խմբային նախագծի նկարագրությունը. խմբային նախագիծը հիմնված է համեմատական մեթոդի վրա: Ուսանողները կուսումնասիրեն հայկական երաժշտության պատմությունը, կներկայացնեն իրենց երկրներում առկա հայկական երաժշտական մշակույթի արժեքները: Խմբի անդամները միասին կորոշեն իրենց աշխատանքի ձևը, Word կամ PowerPoint կամ այլ թվային ծրագրերի օգնությամբ կստեղծեն աշխատանքը՝ ներկայացնելով կատարված համեմատությունները և ուսումնասիրությունների զուգահեռները:

Ուսանողների առաջադիմությունը կգնահատվի ամբողջ ուսումնական շրջանի ընթացքում ստացած գնահատականների հիման վրա, ինչը ձևավորվում է հետևյալ սկզբունքներով.

- 20% - մասնակցություն
- 25% - անհատական աշխատանք
- 25% - խմբային աշխատանք
- 30% - ավարտական քննություն

Գնահատումը կկատարվի տառային մեթոդով համաձայն [ՀՎՀ-ի գնահատման քաղաքականության](#):

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՈՒՇ ՀԱՆՁՆՈՒՄ

Առաջադրանքները պետք է հանձնել նախատեսված ժամկետներում: Այս կերպ ուսանողը հետ չի ընկնի դասերից, իսկ օնլայն ուսուցիչը հնարավորություն կունենա հետևողականորեն գնահատել աշխատանքը: Եթե աշխատանքը հանձնվում է սահմանված ժամկետից մեկ շաբաթ ուշ, ապա գնահատականը նվազում է 10%-ով (եթե իհարկե ուսանողը նախապես չի ստացել օնլայն ուսուցչի



համաձայնությունը): Սահմանված ժամկետից երկու շաբաթ ուշ հանձնված աշխատանքները կընդունվեն (միայն ստուգվելու են), բայց չեն գնահատվի: Բացառություններ կլինեն միայն որոշ հարգելի դեպքերում:

Գրանցվելու համար, խնդրում ենք լրացնել [գրանցման հայտը](#):



AC350: Հայկական երաժշտության ներածություն-մաս 2 (արևելահայերեն) - 3 կրեդիտ

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ (սեղմեք այստեղ ակադեմիական օրացույցը տեսնելու համար)

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՆԴՂԱԿ (ԺԱՄԵՐ/ՇԱԲԱԹ)

Նյութեր (ձայնա-, տեսա- և տեքստային)	1-2 ժամ
Քննարկումներ	2-3 ժամ
Հարցումներ, առաջադրանքներ	1-2 ժամ
Շաբաթական ակնկալվող մասնակցություն	4-7 ժամ

Մասնակիցները պետք է.

- նամակագրական կապ ունենան իրենց համակուրսեցիների հետ և հաղորդակցվեն ֆորում-քննարկումների, չաթի, Skype-ի, ձայնա- և տեսակոնֆերանսի միջոցով,
- ընթերցեն և քննարկեն օնլայն տեքստերն ու նյութերը,
- աշխատեն փոքր խմբերով և անհատապես՝ կիրառելով օնլայն գործիքների մի ամբողջ համակարգ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ներկայացնել հայկական երաժշտության պատմությունը, վերջինիս հիմնական բաղադրիչները և առանձնահատկությունները: Ուսանողները կձանոթանան հայկական միջնադարյան երաժշտաձիսական մատյանների, նոտագրության համակարգի և դրանց զարգացումների, 19-րդ դարի հայ կոմպոզիտորական արվեստի, ինչպես նաև հայկական ազգային դասական երաժշտության և հայազգի անվանի երաժիշտների կոմպոզիտորական աշխատանքների հետ: Ուսանողները կիմանան նաև կոմպոզիտորական արվեստի նոր միտումների մասին:

Դասընթացը մատչելի է մեծ լսարանի համար և հարուստ է հայկական երաժշտական մշակույթի բացառիկ նմուշներով՝ հայ երգարվեստի լավագույն ներկայացուցիչների կատարմամբ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՑՈՒԹԵՐԸ

Անհրաժեշտ չէ տպագրել օնլայն նյութերը: Դրանք դասերի մասն են կազմում: Ուսանողները պետք է կարդան, լսեն, դիտեն ամբողջ նյութը և կատարեն բոլոր առաջադրանքները:

Օնլայն նյութերը կազմված են հասարակայնորեն հասանելի մասնագիտական պատմական գրականության, գիտական ուսումնական ծրագրերի, հայ և օտարազգի հեղինակների ուսումնասիրությունների, բազմալեզու աշխատանքների և հրապարակումների հիման վրա:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դասընթացն ավարտելուց հետո ուսանողները ծանոթ կլինեն միջնադարյան Հայաստանի երաժշտաձիսական մատյանների, հայ հոգևոր երաժշտության և գրանցման համակարգերի հետ:



Նրանք գիտելիքներ կունենան հայ նշանավոր կոմպոզիտորներ Կոմիտասի, Տ. Չուխաջյանի, Քրիստափոր Կարա-Մուրզայի և այլոց ստեղծագործական ուղու և կյանքի մասին:

ԹԵՄԱՆԵՐԸ

- Հայ միջնադարյան երաժշտաժիսական մատյաններ
- Հայ հոգևոր երաժշտության գրանցման համակարգերը
- Հայ կոմպոզիտորական արվեստ: Հայ երաժշտական մշակույթը 19-րդ դարի II կեսին (մաս 1):
- Հայ կոմպոզիտորական արվեստ: Հայ երաժշտական մշակույթը 19-րդ դարի II կեսին (մաս 2):
- Կոմիտաս
- Հայ մասնագիտական կոմպոզիտորական արվեստ
- Արամ Խաչատրյան, նրա ժամանակակիցները և հետևորդները
- 60-70 – ական թվականների հայ կոմպոզիտորական արվեստի նոր միտումները

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Էլեկտրոնային նյութերը պատրաստված են օգտագործման, ինչպես նաև լսարանի համար մատչելի սկզբունքով: Օնլայն ուսուցիչների կողմից անցկացվող առաջադրանքներն ու օնլայն քննարկումները ուսանողներին կօգնեն ներգրավվել հայկական երաժշտության պատմության իրադարձություններն ուսումնասիրելու և մանրամասն վերլուծություն կատարելու գործընթացի մեջ: Անհատական և խմբային առաջադրանքների օգնությամբ ուսանողները կկատարեն ճշգրիտ ուսումնասիրություններ և տեղեկատվության փոխանակում: Որքան ուսանողը ներգրավված լինի ուսման մեջ, այնքան արդյունավետ կլինի վերջինս:

ԴԱՍԱՑՈՒՑԱԿԸ

Դասընթացը տևում է 9 շաբաթ, ներառյալ ծանոթացման շաբաթը և նախատեսում է ուսանողի մասնակցությունը յուրաքանչյուր շաբաթվա առնվազն 5 օրերի ընթացքում:

Շաբաթ 0	Ծանոթացման շաբաթ Ուսանողները ծանոթանում են Ուսանողի Ուղեցույցի հետ, լրացնում են ուսման ոճերի հարցաշարը, լրացնում են անձնական թերթիկը, ներկայանում են միմյանց, մասնակցում են ֆորում-քննարկմանը, գտնում են այն ժամային գոտին, որտեղ աշխատելու են: Ուսանողները ծանոթանում են նաև հաղորդակցման և ուսումնական այն օնլայն գործիքների հետ, որոնք կիրառելու են դասընթացի ընթացքում:
Շաբաթ 1-8	Դաս 1-8 (օնլայն տեքստերի և մուլտիմեդիա միջոցների օգտագործում) Անհատական և խմբային աշխատանքներ Հարցումներ
Շաբաթ 3	Անհատական աշխատանքի հանձնում
Շաբաթ 7	Խմբային աշխատանքի հանձնում

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Ուսանողները պետք է ակտիվորեն մասնակցեն օնլայն քննարկումներին, ֆորումներին, չաթերին, մասնակցեն անհատական և խմբային աշխատանքներին, ինչպես նաև հանձնեն բոլոր առաջադրանքները սահմանված ժամկետներում:

Ուսանողները պետք է ծանոթ լինեն և ենթարկվեն [ՀՎՀ-ի ակադեմիական քաղաքականությանը](#):

Անհատական նախագծի նկարագրությունը. յուրաքանչյուր ուսանող աշխատում է իր անհատական



նախագծի վրա և ներկայացնում այն սահմանված ժամկետում: Նախագիծը պետք է հիմնված լինի դասընթացի ընթացքում ուսումնասիրած նյութի վրա: Ուսանողները նախապես պետք է օնլայն ուսուցչի հետ խորհրդակցեն ընտրված թեմայի և բովանդակության շուրջ: Այն ուսանողները, ովքեր թեման կընտրեն նախօրոք, հնարավորություն կունենան դասընթացի ընթացքում կատարված աշխատանքները և քննարկումներն օգտագործել իրենց նախագծում:

Խմբային նախագծի նկարագրությունը. խմբային նախագիծը հիմնված է համեմատական մեթոդի վրա: Ուսանողները կուսումնասիրեն հայկական երաժշտության պատմությունը, կներկայացնեն իրենց երկրներում առկա հայկական երաժշտական մշակույթի արժեքները: Խմբի անդամները միասին կորոշեն իրենց աշխատանքի ձևը, Word կամ PowerPoint կամ այլ թվային ծրագրերի օգնությամբ կստեղծեն աշխատանքը՝ ներկայացնելով կատարված համեմատությունները և ուսումնասիրությունների գուգահեռները:

Ուսանողների առաջադիմությունը կգնահատվի ամբողջ ուսումնական շրջանի ընթացքում ստացած գնահատականների հիման վրա, ինչը ձևավորվում է հետևյալ սկզբունքներով.

- 20% - մասնակցություն
- 25% - անհատական աշխատանք
- 25% - խմբային աշխատանք
- 30% - ավարտական քննություն

Գնահատումը կկատարվի տառային մեթոդով համաձայն [ՀՎՀ-ի գնահատման քաղաքականության](#):

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՈՒՇ ՀԱՆՁՆՈՒՄ

Առաջադրանքները պետք է հանձնել նախատեսված ժամկետներում: Այս կերպ ուսանողը հետ չի ընկնի դասերից, իսկ օնլայն ուսուցիչը հնարավորություն կունենա հետևողականորեն գնահատել աշխատանքը: Եթե աշխատանքը հանձնվում է սահմանված ժամկետից մեկ շաբաթ ուշ, ապա գնահատականը նվազում է 10%-ով (եթե իհարկե ուսանողը նախապես չի ստացել օնլայն ուսուցչի համաձայնությունը): Սահմանված ժամկետից երկու շաբաթ ուշ հանձնված աշխատանքները կընդունվեն (միայն ստուգվելու են), բայց չեն գնահատվի: Բացառություններ կլինեն միայն որոշ հարգելի դեպքերում:

Գրանցվելու համար, խնդրում ենք լրացնել [գրանցման հայտը](#):

Երաժշտության դասընթացի հեղինակներ

Հայկական երաժշտություն դասընթացի հիմնական նյութը հիմնված է հետևյալ անվանի գիտնականների աշխատությունների վրա.

- Դոկտոր Միեր Նավոյան (պրոֆեսոր, Երևանի պետական կոնսերվատորիա, Երևան, Հայաստան),
- Դոկտոր Ալինա Փահլևանյան (պրոֆեսոր, Երևանի պետական կոնսերվատորիա, Երևան, Հայաստան),
- Դոկտոր Արաքսյա Սարյան (պրոֆեսոր, Երևանի պետական կոնսերվատորիա, Երևան, Հայաստան),
- Դոկտոր Տաթևիկ Շախկույան (պրոֆեսոր, Երևանի պետական կոնսերվատորիա, Երևան, Հայաստան):